2016 ֆինանսական տարվա ծրագրերի նկարագիր

Habitat for Humanity® Armenia

Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիայի արձագանքը Հայաստանում բնակարանային աղքատության խնդրին

Տեղեկություններ երկրի մասին

Մայրաքաղաքը՝ Երևան
Բնակչությունը՝ 2,983,990
Աղքատության ցուցանիշը՝ 32 տոկոս
Գործազրկությունը՝ 17.6 տոկոս
Կյանքի միջին տևողությունը՝ 74.8 տարի

Գիտե՞ք արդյոք...

Հայաստանն առաջին երկիրն է աշխարհում, որն ընդունել է քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն:

Ըստ Աստվածաշնչի՝ բնիկ հայերը Հայկի հետնորդներն են: Հայկը Նոյի թոռան թոռն է, ում տապանը ջրհեղեղից հետո հանգրվանեց Արարատ լեռան վրա:

Հարգելի ընթերցող,

Որպես Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամի գործադիր տնօրեն՝ ես օրինված եմ, որ ունեմ հնարավորություն օգնելու Հայաստանում ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին բարելավելու իրենց բնակարանային պայմանները: Հայաստանը պետք է դառնա մի երկիր, որտեղ յուրաքանչյուրը կունենա ապրելու պատշաճ կացարան: Չնայած ահագնացող աղետներին և համայնքների փոփոխվող կարիքներին՝ Հաբիթաթը միավորում է մարդկանց կառուցելու տներ, համայնքներ և հույս:

2015 ֆինանսական տարում՝ հուլիսի 1, 2014 - հունիսի 30, 2015, մեր գործընկեր ընտանիքների, միջազգային և տեղական կամավորների, գործընկեր ֆինանսական կազմակերպությունների միասնական ջանքերի շնորհիվ մենք օգնել ենք 853 ցածր եկամուտ ունեցող ընտանիքների՝ բարելավելու իրենց բնակարանային պայմանները և ավելի քան 1,600 անհատների տրամադրել ենք բնակարանային ոլորտի աջակից ծառայություններ:

2016 ֆինանսական տարվա ծրագրերի միջոցով մենք պարտավորվում ենք աջակցել ավելի քան 1,500 հայ ընտանիքի: Ընտանիքներին և համայնքներին ուղղված ծրագրերի հաջող իրականացումը պահանջում է հսկայական ջանքեր և, իհարկե, հմուտ ղեկավարում, աշխատասիրություն և մանրակրկիտ պլանավորում:

Դնելով նոր թիրախներ և աղոթելով Հայաստանում մեր հնարավորությունների համար՝ ես ակնկալում եմ տեսնել արդեն բարելավված տներ, ուժեղացված համայնքներ և վերականգնված հույս:

Լուիզա Վարդանյան

Գործադիր տնօրեն

Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի մասին

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» (ՀՖՀ Արմենիա) հիմնադրամը «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Ինթերնեշնլ»-ի ազգային գրասենյակն է Հայաստանում, որի նպատակն է վերացնել բնակարանային աղքատությունը և բարելավել ցածր եկամուտ ունեցող ընտանիքների բնակարանային պայմանները: ՀՖՀ Արմենիան իրականացնում է ծրագրեր՝ ուղղված տների և բնակարանների վերակառուցմանը և վերանորոգմանը, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգմանն ու էներգաարդյունավետության բարձրացմանը՝ համագործակցելով ֆինանսական հաստատությունների հետ, ինչպես նաև իրազեկման աշխատանքներ է տանում մատչելի բնակարանային պայմաններ ստեղծելու ուղղությամբ: Այն Հայաստանում գործում է 2000 թ-ից և մինչ 2015 թ-ի հուլիս աջակցել է 4,323 ընտանիքի:

Լրացուցիչ տեղեկությունների, կամավոր աշխատանքի կամ աջակցության համար այցելեք www.habitat.am կայքէջ:

2001-2015 ֆինանսական տարիների ընթացքում աջակցություն ստացած ընտանիքների թվային պատկերը



Բնակարանային միկրոֆինանսավորում

ՀՖՀ Արմենիան անբավարար բնակարանային պայմանների խնդիրը լուծում է բնակարանային միկրոֆինանսավորման ծրագրերի իրականացման միջոցով՝ համագործակցելով ունիվերսալ վարկային կազմակերպությունների հետ: Այս ծրագրերի նպատակն է օժանդակել ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին վերանորոգելու և վերակառուցելու իրենց կացարանները, բարելավելու էներգաարդյունավետությունը, ջրամատակարարման և սանիտարական պայմանները և օգտագործելու վերականգնվող էներգիայի աղբյուրներ: Ծրագրերը նպատակ ունեն նաև կյանքի վերակոչել պատերազմից տուժած քաղաքային և գյուղական համայնքները:

Բնակարանային միկրոֆինանսավորման ծրագրերի շրջանակներում ՀՖՀ Արմենիան 2000 թ-ից մինչև 2015 թ-ի հունիսի վերջ սպասարկել է 3,790 ընտանիքների:

Ծրագրի անվանումը՝ «Բնակարանային միկրոֆինանսավորում՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին»

- **Ծրագրի տևողությունը՝** հունիս, 2011թ. – դեկտեմբեր, 2017թ.
- **Ծրագրի բյուջեն 2016 ՖՏ-ում՝** $94,500
- **Ներդրված վարկային ռեսուրսները՝** շուրջ $2.4մլն, որից $0.7 մլն՝ Dutch International Guarantees for Housing-ի (DIGH) վարկային միջոցներ և $1.7 մլն ՝ «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի համաֆինանսավորում
- **Սպասարկված գործընկեր ընտանիքների թիվը (հուլիսի 1, 2011թ. - հունիսի 30, 2015թ.)՝** 2382
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների թիվը 2016 ՖՏ-ում՝** 700
- **Մեկ ընտանիքի սպասարկման միջին գումարը՝** $3,650
- **Ծրագրի գործընկերները՝** «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ, DIGH

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ապրող ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքներին՝ բարելավելու իրենց բնակարանային պայմանները՝ այդպիսով բարձրացնելով իրենց սոցիալ-տնտեսական բարեկեցությունը: Ցածր եկամուտ ունեցող ընտանիքները հաճախ դժվարանում են վարկ ստանալ բանկերից ոչ բավարար եկամուտներ ունենալու և համապատասխան փաստաթղթեր չներկայացնելու պատճառով: Համագործակցելով միկրոֆինանսական հաստատությունների հետ՝ ՀՖՀ Արմենիան հասանելի է դարձնում ֆինանսական ռեսուրսները ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար: Այս ծրագրի շրջանակներում ՀՖՀ Արմենիան տրամադրում է նաև տեխնիկական աջակցություն՝ կազմակերպելով դասընթացներ ծրագրին մասնակից ընտանիքների, ինչպես նաև գործընկեր ֆինանսական հաստատության վարկային մասնագետների համար, մշակելով և բաժանելով տեղեկատվական բուկլետներ: Սույն ծրագրի շրջանակներում կամավորները մասնակցում են շինարարական աշխատանքներին:

Թիրախային խմբի կացարաններում առկա հիմնական խնդիրներն են կացարանների թերի ջերմամեկուսացումը, բնական գազի, ջրի և կոյուղատար համակարգերի տեխնիկական վատ վիճակը, ոչ հիգիենիկ սանիտարական հանգույցները և խոհանոցները: Պատուհանների ջերմամեկուսացումն առաջնային խնդիր է բոլոր մարզերում: Շատ ընտանիքներ չունեն խմելու ջրի մատակարարման համակարգեր: Բնական գազով ջեռուցման համակարգերի բացակայության պատճառով մի շարք մարզերում ցածր եկամուտ ունեցող ընտանիքները ստիպված են կացարանի տաքացման համար փայտ օգտագործել, որն իր հերթին բացասական ազդեցություն է ունենում շրջակա միջավայրի վրա:

Ծրագրի անվանումը՝ «Արևային էներգիայի օգտագործումը ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կողմից»

- **Ծրագրի տևողությունը՝** հուլիս, 2014թ. – հունիս, 2018թ.
- **Ծրագրի բյուջեն 2016 ՖՏ-ում՝** $21,500
- **Ներդրված վարկային ռեսուրսները՝** ընդհանուր $200,000, որից $100,000-ը՝ ՀՖՀ Արմենիայի ֆինանսավորում և $100,000-ը՝ «Կամուրջ» ՈւՎԿ ՓԲԸ-ի համաֆինանսավորում
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների թիվը 2016 ՖՏ-ում՝** 90
- **Մեկ ընտանիքի սպասարկման միջին գումարը՝** $1,250
- **Ծրագրի գործընկերը՝** «Կամուրջ» ՈւՎԿ ՓԲԸ, արևային ջրատաքացուցիչներ տեղադրող ընկերություններ

Ծրագրի նկարագիրը

Արևային էներգիայի օգտագործումը կենցաղում արդյունավետ լուծում է ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար: Հաշվի առնելով Հայաստանի արևային մեծ ներուժը՝ արևային ջրատաքացուցիչ համակարգերի կիրառումը կարող է զգալիորեն մեղմացնել էներգակիրների աճող գների ազդեցությունը բնակչության բարեկեցության վրա: Բնական գազի գինը 2006-2015թթ. ընկած ժամանակահատվածում աճել է 240%-ով՝ բացասաբար ազդելով ցածր եկամուտ ունեցող բնակչության ջեռուցման պայմանների վրա: Այս ծրագրի իրականացման միջոցով ՀՖՀ Արմենիան նպատակ ունի խթանել արևային էներգիայի կիրառումը ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կողմից՝ միաժամանակ հնարավոր դարձնելով մատչելի տաք ջրի մատակարարումը ողջ տարվա ընթացքում: Կազմակերպությունը տրամադրում է նաև տեխնիկական աջակցություն բնակչության իրազեկությունը՝ արևային տեխնոլոգիաների օգուտների վերաբերյալ բարձրացնելու նպատակով՝ կազմակերպելով դասընթացներ ծրագրի մասնակից ընտանիքների, ինչպես նաև գործընկեր ֆինանսական հաստատության վարկային մասնագետների համար, մշակելով և բաժանելով տեղեկատվական բուկլետներ:

Ծրագրի անվանումը՝ «Հույս կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին»

- **Ծրագրի տևողությունը՝** հուլիս, 2012թ. - հուլիս, 2016 թ.
- **Ծրագրի բյուջեն 2016 ՖՏ-ում՝** $52,500
- **Ներդրված վարկային ռեսուրսներ՝** ընդհանուր $250,000 ՀՖՀ Արմենիայի կողմից
- **Սպասարկված գործընկեր ընտանիքների թիվը՝ (հուլիս, 2012թ. – հունիս, 2015թ.)՝** 326
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների թիվը 2016 ՖՏ-ում՝** 30
- **Մեկ ընտանիքի սպասարկման միջին գումարը՝** $3,035
- **Ծրագրի գործընկեր՝** «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ

Ծրագրի նկարագիրը

Սույն ծրագիրը հասանելի է դարձնում ֆինանսական ռեսուրսները ցածր եկամուտ ունեցող, բնակարանային անբավարար պայմաններում ապրող, սակայն տնտեսապես ակտիվ և կանանց կողմից ղեկավարվող ընտանիքների համար: Ցածր եկամուտ ունեցող կանայք հաճախ բախվում են անօթևան մնալու խնդրին և ոչ բավարար միջոցների պատճառով ստիպված են լինում ապրել բնակարանային սուղ և անապահով պայմաններում:

Հայաստանում հիմնականում կանայք առավել քիչ են վաստակում, քան տղամարդիկ, որը խոչընդոտ է ցածր եկամուտ ունեցող կանանց համար ֆինանսական հաստատությունների կողմից վարկավորվելու գործում: Սույն ծրագիրը հնարավորություն է ընձեռում կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին ստանալ ֆինանսավորում, ինչպես նաև ֆինանսական միջոցների կառավարման ուսուցում և շինարարական տեխնիկական աջակցություն: Վերջիններս նպաստում են ընտանիքների և նրանց համայնքների ֆինանսական կայունությանը՝ միաժամանակ օգնելով նրանց զարգացնել ֆինանսական գիտելիքները:

Բազմաբնակարան շենքերի վերանորոգում և էներգաարդյունավետության բարձրացում

Համատիրությունների կարողությունների զարգացում

Հայաստանում բնակարանային ֆոնդի մեծ մասը գտնվում է անմխիթար վիճակում և չունի պատշաճ պահպանման և կառավարման համակարգեր: Բազմաբնակարան շենքերի սպասարկմանն ուղղված միջոցները, որոնք ձևավորվում են սեփականատերերի պարտադիր վճարներից, բավարար չեն շենքերի վերանորոգման ծախսերը հոգալու համար:

Միևնույն ժամանակ շենքերում իրականացված չէ պատշաճ ջերմամեկուսացում, քանի որ կառուցապատման և ջեռուցման նախկինում կիրառված մեթոդները չեն հիմնվել էներգաարդյունավետության չափանիշների վրա: Էներգիայի անարդյունավետ օգտագործումն ավելի է խստացնում էլեկտրաէներգիայի գնաճի ազդեցությունը ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների վրա:

Սույն խնդիրը լուծելու համար ՀՖՀ Արմենիան իրականացնում է ծրագրեր՝ ուղղված բազմաբնակարան շենքերում ընդհանուր տարածքների վերանորոգմանը և էներգաարդյունավետության բարձրացմանը: Այս ծրագրերի շրջանակներում ՀՖՀ Արմենիան համագործակցում է քաղաքապետարանների հետ, որոնք տրամադրում են մինչև 40% սուբսիդավորում, և ֆինանսական հաստատությունների հետ, որոնք տրամադրում են վարկավորում:

Ծրագրի անվանումը՝ «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր տարածքների վերանորոգում»

- **Ծրագրի տևողությունը՝** 2011թ. - անժամկետ
- **Ծրագրի բյուջեն 2016 ՖՏ-ում՝** $23,600
- **Ներդրված վարկային ռեսուրսներ՝** $20,100՝ ՀՖՀ Արմենիայի ֆոնդից
- **Սպասարկված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը (2011թ. - հունիսի 30, 2015թ.)՝** 284 ընտանիք, 6 շենք
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը 2016 ՖՏ-ում՝** 120 ընտանիք, 3 շենք
- **Մեկ շենքին տրամադրվող վարկի միջին գումարը՝** $6,700
- **Ծրագրի գործընկերները՝** քաղաքապետարաններ, «Ինեկոբանկ» ՓԲԸ

Ծրագրի նկարագիրը

Հայաստանում բնակչության գրեթե կեսը բնակվում է բազմաբնակարան շենքերում (շուրջ 19,000 շենք և 435,350 բնակարան): Երկրում բնակարանային ֆոնդի մի ստվար հատված անմխիթար վիճակում է և շարունակում է վատթարանալ: Շենքերի սեփականատերերից հավաքագրվող պարտադիր վճարները բավարար չեն շենքերի վերանորոգման և պահպանման ծախսերը հոգալու համար:

Ծրագիրը մեկնարկել է 2011թ. և ուղղված է բազմաբնակարան շենքերում ընդհանուր տարածքների վերանորոգմանը և էներգաարդյունավետության բարձրացմանը: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել համատիրությունների կարողությունները և վերջիններիս համար հասանելի դարձնել ֆինանսական միջոցները՝ համագործակցելով ֆինանսական հաստատությունների հետ:

2016 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիան կօժանդակի առնվազն 120 ընտանիքների՝ վերանորոգելու համատիրությունների կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները (տանիք, խողովակներ, պատուհաններ, դռներ, վերելակներ և այլն): Վերանորոգված տարածքները հետագայում կպահպանվեն համատիրությունների կողմից:

Ծրագրի անվանումը՝ «Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում ՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին» (ԲԲՇԷԱԲ)

- **Ծրագրի տևողությունը՝** հունիս, 2013թ. – ապրիլ, 2017թ.
- **Ծրագրի բյուջեն 2016 ՖՏ-ում՝** $90,500
- **Ներդրված վարկային ռեսուրսները՝** $200,000՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ֆոնդից
- **Սպասարկված ընտանիքների և շենքերի թիվը (հունիս, 2013թ. - հունիսի 30, 2015թ.)՝** 276 ընտանիք, 5 շենք
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը 2016 ՖՏ-ում ՝** 360 ընտանիք, 10 շենք
- **Մեկ շենքին տրամադրվող վարկի միջին գումարը՝** $4,600
- **Ծրագրի նվիրատուն՝** ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ), ՀՖՀ Արմենիայի համաֆինանսավորում
- **Ծրագրի գործընկերները՝** Երևանի քաղաքապետարան, համատիրություններ, «Ինեկոբանկ» ՓԲԸ

Ծրագրի նկարագիրը

Ծրագիրը նպատակ ունի բարելավել բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետության բարձրացման ներդրումների միջավայրը, մշակել և փորձարկել վերարտադրվող ֆինանսական մոդելներ, ինչպես նաև բարձրացնել համատիրությունների ինստիտուցիոնալ կարողությունները: Ծրագիրն ուղղված է Հայաստանի բազմաբնակարան շենքերում բնակվող ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կեցության պայմանների բարելավմանը:

2016 ֆինանսական տարում ավելի քան 10 շենքերի էներգաարդյունավետությունը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝ շքամուտքերի պատուհանների և մուտքի դռների փոխարինում և վերանորոգում, լուսավորության համակարգի արդիականացում և նկուղների ջերմամեկուսացում: Նախատեսվում է նաև ծրագրում ներառված շենքերում իրականացնել էներգաաուդիտ: Տարվա ընթացքում կատարված աշխատանքները կամփոփվեն երկու կլոր սեղան-քննարկումներով՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Ծրագրի անվանումը՝ «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» (ՎԱԷՀՔ)

- **Ծրագրի տևողությունը՝** դեկտեմբեր, 2014թ. - դեկտեմբեր, 2018թ.
- **Ծրագրի բյուջեն 2014-2018՝** շուրջ €1,700,000, որից €1,350,000 ֆինանսավորվում է Եվրամիության կողմից, իսկ €350,000 համաֆինանսավորվում է Վայքի և Սպիտակի քաղաքապետարանների կողմից
- **Ծրագրի բյուջեն 2016 ՖՏ՝** €290,000
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը 2016 ՖՏ-ում՝** 221 ընտանիք, 11 շենք
- **Մեկ շենքի համար նախատեսված աշխատանքների միջին գումարը՝** €29,435
- **Ծրագրի գործընկերները՝** Սպիտակի քաղաքապետարան, Վայքի քաղաքապետարան, բանկեր

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Սպիտակի և Վայքի քաղաքապետարաններին՝ զարգացնելու և փորձարկելու էներգիայի խնայողության մոդելներ՝ բազմաբնակարան և հանրային շենքերում էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումների և արևային էներգիայի կիրառման ճանապարհով՝ համաձայն Եվրամիության Քաղաքապետերի դաշնագրի ներքո իրենց Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների պլանների:

2016 ֆինանսական տարում նախատեսված են հետևյալ հիմնական աշխատանքները. իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումներ Սպիտակի 7 բնակելի շենքում, Վայքի 4 բազմաբնակարան շենքում (տանիքի փոխում և ծածկի ջերմամեկուսացում, մուտքի դռների և պատուհանների փոխում):

Տեխնիկական աջակցություն

Բնակարանային աղքատությունը նվազեցնելու և ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին պատշաճ կացարանով ապահովելու, ինչպես նաև վերջիններիս կողմից ֆինանսական միջոցներ հայթայթելուն աջակցություն տրամադրելու համար ՀՖՀ Արմենիան նշված ընտանիքներին աջակցում է բնակարանի վերանորոգման և այդ աշխատանքների կազմակերպման հարցում, տրամադրում ֆինանսական միջոցների կառավարման ուսուցում, շինարարության տեխնիկական աջակցություն, էներգաարդյունավետության վերաբերյալ դասընթացներ և խորհրդատվություն:

ՀՖՀ Արմենիան օժանդակում է նաև ՈՒՎԿ-ներին ինստիտուցիոնալ մակարդակում տեխնիկական աջակցություն ցուցաբերելու միջոցով առավել զարգացնելու վերջիններիս կարողությունները (վարկային գործակալների ուսուցում, շինարարության տեխնիկական աջակցության և էներգաարդյունավետության ու վերականգնվող էներգիայի, ծրագրի մոնիթորինգի, շուկայի հետազոտման, նոր բնակարանային պրոդուկտների մշակում, կրթական և գովազդային նյութերի մշակում)՝ հաջողությամբ տրամադրելու բնակարանային միկրոֆինանսավորման ծառայություններ թիրախային խմբերին:

2016 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիան պլանավորում է բնակարանային աջակցության ծառայություններ տրամադրել 1,710 անհատի:

Աղետների ռիսկերի նվազեցում և արձագանքում (ԱՌՆԱ)

ՀՖՀ Արմենիան ՀՀ աղետների կառավարման թիմի (ՀՀԱԿԹ) և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի (ԱՌՆԱՊ) անդամ է և արտակարգ իրավիճակների դեպքում կներգրավվի համատեղ գործողություններում՝ աջակցելու ՀՀ կառավարությանը կյանքեր փրկելու և կորուստները նվազեցնելու գործում:

ԱՌՆԱ-ի հիմնական գործողությունները ներառում են ռիսկերի նվազեցման պատրաստվածությունը և արձագանքումը:

ՀՖՀ Արմենիայի Աղետների պատրաստվածության և արձագանքման ռազմավարությամբ սահմանվում են ՀՖՀ Արմենիայի աղետների արձագանքման ծրագրի սկզբունքները, չափանիշները, ինչպես նաև իր՝ աղետների արձագանքման ծրագրի գործողությունների ու համագործակցության շրջանակները:

ՀՖՀ Արմենիան մշակել է երկրին համապատասխանող Աղետների արձագանքման օպերատիվ պլան: Պլանով նախատեսվում է արձագանքման ժամանակացույցը՝ կից գնահատման ձևաթղթերով, հաղորդակցության ստանդարտ նյութերով, օրինակելի բյուջեներով և տեխնիկական լուծումներով, որոնք կարող են կիրառվել աղետի դեպքում: ՀՖՀ Արմենիան մշակել է նաև «Ինչպես դիմակայել երկրաշարժերին» ձեռնարկ, որն ուղղված է բնակիչների՝ երկրաշարժերին դիմակայելու կարողությունների զարգացմանը: ՀՖՀ Արմենիան նպատակ ունի 2016 ֆինանսական տարում բաշխել 800 ձեռնարկ:

Կամավոր աշխատանքի հնարավորություններ

«Գլոբալ վիլիջ». ՀՖՀ Արմենիան իրականացնում է «Գլոբալ վիլիջ» ծրագիրը, որը կամավորներին հնարավորություն է ընձեռում մասնակցել տների կառուցման և վերանորոգման նպատակով դեպի Հայաստան կարճաժամկետ ուղևորություններին՝ անմիջականորեն ներգրավելով կազմակերպության աշխատանքներին: Աշխարհի բոլոր անկյուններից կամավորները միանում են Հաբիթաթի առաքելությանը՝ բարելավելու ցածր եկամուտ ունեցող ընտանիքների բնակարանային պայմանները: ՀՖՀ Արմենիայի հետ միասին «Գլոբալ վիլիջ» թիմի անդամները ձեռք ձեռքի տված աշխատում են գործընկեր ընտանիքների և համայնքի անդամների հետ՝ բարեկարգելով տներ և իրազեկելով անբավարար բնակարանային պայմանների խնդրի, ինչպես նաև թե Հայաստանում, թե ամբողջ աշխարհում Հաբիթաթի՝ պարզ ու մատչելի բնակարանային պայմաններ ստեղծելուն ուղղված ջանքերի մասին: Որպես գործընկերներ՝ թիմի անդամներն օգնում են կառուցելու սիրո, կացարանների, համայնքների և հույսի համաշխարհային ավան:

Մինչ օրս ՀՖՀ Արմենիան հյուրընկալել է ավելի քան 950 կամավորների, որոնք նպաստել են բազմաթիվ հայ ընտանիքների կյանքի բարելավմանը:

«Ինձ և իմ թիմի համար մեծ օրհնություն էր մեր այցելությունը Հայաստան. երկիր, որի բնակիչները շատ դժվարություններ են տեսել, սակայն չեն կորցրել իրենց հավատը և անում են ամեն հնարավոր բան իրենց երկրի ապագայի համար: Աստված օրհնի իմ նոր հայ ընկերներին, և հուսով եմ՝ շատ շուտով կվերադառնամ մեկ այլ թիմի հետ՝ կողք կողքի ապրելու և աշխատելու հայերի հետ և նոր ընկերներ ու բարեկամներ գտնելու նպատակով»:

Վանդա Սմիթ՝ «Գլոբալ վիլիջ» թիմի ղեկավար

«Մեկօրյա շինարարություն». ՀՖՀ Արմենիան իրականացնում է «Մեկօրյա շինարարություն» ծրագիրը, որը հիանալի հնարավորություն է ընձեռում բիզնեսներին, կորպորատիվ խմբերին, կազմակերպություններին և այլն աջակցելու բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներին՝ իրականացնելու պարզ, պատշաճ և մատչելի բնակարան ունենալու իրենց երազանքը:

Ձեր թիմը, անկախ իր շինարարական հմտություններից, կարող է միանալ նախաձեռնությանը և օգնության ձեռք մեկնել այն ընտանիքներին, որոնք Հայաստանի մարզերում ապրում են աղքատ բնակարանային պայմաններում:

Միևնույն ժամանակ Ձեր գործընկերների և ղեկավարների հետ ՀՖՀ Արմենիայի շինարարական նախաձեռնությանը մասնակցելը թիմի ձևավորման և զարգացման արդյունավետ միջոցառում է, ինչպես նաև լավ հնարավորություն համագործակցության և ղեկավարման հմտություններ ձեռք բերելու համար:

Փոխելով ընտանիքի կյանքը…

Մարգարյանների բազմանդամ ընտանիքում երեք սերունդ ապրում է մեկ հարկի տակ՝ Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքում: Ավագ սերնդի ներկայացուցիչներ Դանիելն ու Մանուշակը տարիներ շարունակ ապրել են Դանիելի հայրական տանը, բայց երբ ծնվեցին նրանց երեք երեխաները, սեփական տունն ունենալու անհրաժեշտությունն ավելի մեծացավ:

Չորս տարի առաջ Դանիելն ու Մանուշակը սկսեցին նոր տան կառուցումը, բայց նրանց այդպես էլ չհաջողվեց ավարտին հասցնել այն սեփական միջոցներով: Ընտանիքի անդամները ջանք ու եռանդ չեն խնայում ապրուստ հայթայթելու համար, բայց հազիվ են ծայրը ծայրին հասցնում: Առանց ՀՖՀ Արմենիայի աջակցության Մարգարյանների համար պատշաճ պայմաններ ունանալն այդպես էլ երազանք կմնար:

ՀՖՀ Արմենիայի հետ համագործակցությունը մեծ փորձառություն պարգևեց ընտանիքին, քանի որ հյուրընկալեցին «Գլոբալ վիլիջ» կամավորական թիմի, ովքեր և աջակցեցին իրենց վերանորոգման աշխատանքներ իրականացնելիս: ՀՖՀ Արմենիայի միջամտության շնորհիվ էր, որ Մարգարյանների կյանքի որակն էապես փոխվեց:

Աջակցեք ևս մեկ ընտանիքի՝ փոխելու իր կյանքը

Հայաստանում դեռևս կան բազմաթիվ ընտանիքներ, որոնք շարունակում են ապրել աղքատ բնակարանային պայմաններում: Միացեք մեր նախաձեռնությանը՝ կառուցելու պայծառ ապագա պատշաճ բնակարանային պայմաններ տրամադրելու միջոցով: Դուք կարող եք դառնալ մեր առաքելության մասնիկը Ձեր ֆինանսական նվիրատվությունների և կամավորական աշխատանքի շնորհիվ:

Ցանկացած չափի նվիրատվություն այսօր նշանակում է, որ շուտով մեկ այլ ընտանիք կկարողանա ապրել ապահով, պատշաճ և մատչելի կացարանում:

Ձեռք ձեռքի տալով՝ մենք միասին կարող ենք կոտրել աղքատության շղթան:

Կատարեք նվիրատվություն

Նվիրաբերեք այսօր և փոփոխեք ընտանիքների կյանքը: Եվս մեկ օր աղքատ բնակարանային պայմաններում ապրելը կարող է ճակատագրական լինել սերունդների համար:

Ձեր նվիրատվությունը կամ ներդրումը կարող է օգնել.

- Աջակցել 1 ընտանիքի՝ $3,300
- Աջակցել 10 ընտանիքի՝ $33,000
- Աջակցել 50 ընտանիքի՝ $165,000
- Աջակցել 100 ընտանիքի՝ $330,000
- Բարելավել 1 բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքները և բարձրացնել շենքի էներգաարդյունավետությունը՝ $8,000
- Բարելավել 10 բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները և բարձրացնել շենքերի էներգաարդյունավետությունը՝ $80,000
- ԲԲՇ վերանորոգման և էներգաարդյունավետության բարձրացման ծրագրերը խթանելու և առավել լայնամասշտաբ դարձնելու նպատակով երաշխիքային ֆոնդ ստեղծելու համար՝ $100,000

Կատարեք նվիրատվություն առցանց՝

ԱՄՆ դոլար - www.habitat.org/donate/armenia

Եվրո - www.habitatforhumanity.org.uk/donate/armenia

Բանկային փոխանցում՝

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ, HSBC Բանկ Հայաստան

ՀՀ՝ 001-174127-001

Շնորհակալություն

Habitat for Humanity® Armenia

Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա
Հասցե՝ Հանրապետության 85 ա, բն. 9,
Երևան 0001, Հայաստան
Հեռախոս՝ +37410 587188
Էլ. փոստի հասցե՝ info@habitat.am
Կայքէջ՝ www.habitat.am